ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՄԱՐՏԻ 2023թվականի N 65-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ /ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ/ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով,ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի N 596 որոշումը, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 29.11.2022թ. թիվ 87-Ն որոշումը և Դսեղ գյուղի բնակիչ Նշան Վիլունի Թումանյանի /մուտք՝ 24.03.2023թ. թիվ 128/ դիմումը՝
Որոշում եմ.

1. Բավարարել Դսեղ գյուղի բնակիչ Նշան Վիլունի Թումանյանի դիմումը և տրամադրել ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Դսեղ,3-րդ փողոց,թիվ 24 հասցեում գտնվող նոր կառուցված << Բնակելի տան>> ավարտական ակտը (շահագործման թույլտվություն):

2.Շինության ավարտական ակտ (շահագործման թույլտվություն) տրամադրելու համար համայնքապետարանի հաշվեհամարին մուծել 5000 դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23 թ. մարտի 27
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՄԱՐՏԻ 2023թվականի N 66-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՀՆԻՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ, ՋԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.046 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով 10.06.2008թ.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ-117-Ն օրենքով, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով,ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,ինչպես նաև հաշվի առնելով, որ հողատարածքը չի գտնվում 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին,չի առաջացնում սերվիտուտ,հիմք ընդունելով ժառանգության իրավունքի 08.02.2023թ. վկայագիրը՝ գործ N 33 (սեղանամատյան՝ N433,), <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը և քաղաքացի Արշալույս Ալֆոնի Թաթոյանի/մուտք՝ 21.03.2023թ. թիվ 122/ դիմումը՝
Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Արշալույս Ալֆոնի Թաթոյանի /ծնված՝ 20.05.1976թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք,Ահնիձոր գյուղի կադաստրային քարտեզի 06-012-0008 ծածկագրում գտնվող 1980թ. կառուցված 176,3 քմ մակերեսով բնակելի տան,42,60քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբի, 1,10 քմ մակերեսով զուգարանի,77,30 քմ մակերեսով անասնաշենքի,29,20 քմ մակերեսով անասնաշենքի բաց պատշգամբի, 120,5քմ մակերեսով ծածկի և 0,276 համակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:
2. Թումանյան համայնք,գյուղ Ահնիձոր, 06-012-0008 կադաստրային ծածկագրում Ահնիձոր գյուղի բնակիչ Արշալույս Ալֆոնի Թաթոյանին պատկանող սեփականաշնորհված 0,23 հա մակերեսով տնամերձ հողամասի չափից մինչև 20% ավել օգտագործվող 0,046 հա մակերեսով

հողամասի նկատմամբ ճանաչել փաստացի օգտագործող Արշալույս Ալֆոնի Թաթոյանի սեփականության իրավունքը:
3. 06-012-0008 կադաստրային ծածկագրում գտնվող բնակելի տանը և հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գյուղ Ահնիձոր, փողոց 3, թիվ 9/5 հասցե:
4. Վերականգնել և ճանաչել Արշալույս Ալֆոնի Թաթոյանի /ծնված՝ 20.05.1976թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք,գյուղ Ահնիձոր 06-012-0109-0018 կադաստրային ծածկագրից առանձնացված 1.213 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
5. Վերականգնել և ճանաչել Արշալույս Ալֆոնի Թաթոյանի /ծնված՝ 20.05.1976թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք,գյուղ Ահնիձոր 06-012-0104-0027 կադաստրային ծածկագրով 5.791 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ:
6. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
7. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
8. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. մարտի 27
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՄԱՐՏԻ 2023թվականի N 67-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԴՍԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-035-0015-0008 ԾԱԾԿԱԳՐԻ,3-ՐԴ ՓՈՂՈՑ, 13/1 ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՎՈԼՈԴՅԱ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԵԳԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտ արված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 05,01,2022 թվականի թիվ 14-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Վոլոդյա Մարտիրոսի Եգանյանիկողմից ինքնակամ կառուցված բնակելի տունը, անասնաշենքըև խոհանոցը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ,հաշվի առնելով համապատասխան որակավորում ունեցող ԱՁ <<Տարոն Վարդանյան >>-ի կողմից չափագրված բնակելի տան,անասնաշենքի և խոհանոցի հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը՝ 2023KCKUNE տրված՝04.02.2023թ.և քաղաքացի Վոլոդյա Մարտիրոսի Եգանյանի /մուտք 22.03.2023թ. թիվ 123/ դիմումը

Որոշում եմ՝

1. Հաշվի առնելով չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը՝ 2023KCKUNE օրինականացնել համատեղ սեփականության իրավունքով Վոլոդյա Մարտիրոսի Եգանյանին,Սոֆյա Սեդրակի Գալստյանին,Համլետ Վոլոդյայի Եգանյանին պատկանող Թումանյան համայնք, Դսեղ գյուղ, 3-րդ փողոց, բնակելի տուն 13/1 հասցեում, 06-035-0015-0008 կադաստրային ծածկագրով հողամասում ինքնակամ կառուցված այլ անձանց

իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնող, ինժինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում չգտնվող, առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող և ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված 38.4քմ արտաքին մակերեսով երկհարկանի բնակելի տունը, 67.1քմ արտաքին մակերեսով անասնաշենքը և 31.2քմ արտաքին մակերեսով խոհանոցը:

2. Վոլոդյա Մարտիրոսի Եգանյանին՝ համայնքապետարանի 900265002528 հաշվեհամարին ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճարել 72353.34ՀՀ դրամ, որից 38.4քմ ընդհանուր արտաքին մակերեսով երկհարկանի բնակելի տան օրինականացման համար՝ 28531.2ՀՀ դրամ, 67.1 արտաքին մակերեսով անասնաշենքի օրինականացման համար՝ 29913.18 ՀՀ դրամ և31.2 քմ խոհանոցի օրինականացման համար՝13908.96ՀՀ դրամ:

3. Վերջիններիս վճարման անդորրագիրը հանդիսանում է սույն որոշման անբաժանելի մասը:

4. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրամցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. մարտի 27
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2023թվականի N 68-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Հովիկի Դալլաքյանի դիմումը, Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ 1376145, տրված 30.06.2004թ.-ին և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Սամվել Հովիկի Դալլաքյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ, գյուղ Դսեղ (ծած.06-035-079-000019) բնակելի կառուցապատման հողամասին, մակերեսի չափը՝ 0,126 հա տրամադրել նոր փոստային << ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Դսեղ, 52-րդ փողոց,6 հողամաս>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23 թ. մարտի 28
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՄԱՐՏԻ 2023թվականի N 69-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով քաղաքացի Սպարտակ Հովիկի Սարգսյանի դիմումը,ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը,տրված 26.02.2021թ.գրանցամատյանի գրանցում N 556 և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Սպարտակ Հովիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ, գյուղ Շամուտ (ծած.06-085-0023-0010) բնակելի տանը, մակերեսի չափը՝ 95,14 քմ և բնակելի կառուցապատման հողամասին, մակերեսի չափը՝ 0,17 հա տրամադրել նոր փոստային << ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Շամուտ, 1-ին փողոց,13 բնակելի տուն>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. մարտի 29
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՐՏԻ 2023թվականի N 70-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-071-0126-0007 ԾԱԾԿԱԳՐԻ 0.6566 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով,66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, 66-րդ հոդվածի 2-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2023թ. փետրվարի 27-ի թիվ 12-Ա որոշումը, հաշվի առնելով Մարց գյուղի գյուղապետերանի և Ալբերտ Մուսայի Վարդանյանի միջև 03.11.2005 թվականին կնքված հողամասի /խոտհարք/ 25 տարի ժամկետով վարձակալության 1436 պայմանագիրը, դրա հիման վրա տրամադրված հողամասի վարձակալության իրավունքի նոր նմուշի թիվ 23.03.2023-06-0022 վկայականը՝
Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, վարձակալության իրավունքով տրամադրված 06-071-0126-0007 ծածկագրի 0.6566 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության հողատեսքը 550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամով ուղղակի վաճառքով օտարել Ալբերտ Մուսայի Վարդանյանին:
2.Հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
3.Օրենքով սահմանված կարգով Ալբերտ Մուսայի Վարդանյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր և համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. մարտի 30
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՐՏԻ 2023թվականի N 71-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՉԿԱԼՈՎ ԳՅՈՒՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-089-0124-0003 ԾԱԾԿԱԳՐԻ 0.72394 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՐԿԱԴԻ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 70–րդ հոդվածներով, 2003 թվականի հոկտեմբերի 8-ի «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 13-րդ կետի գ) ենթակետը, 22-րդ և 23-րդ կետի դրույթները, Թումանյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 69-Ա որոշումը և հաշվի առնելով աճուրդի կազմակերպչի 2023 թվականի մարտի 27-ի «Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդով վաճառելու մասին» թիվ 3 արձանագրությունը, ըստ որի 2023 թվականի մարտի 27-ին Թումանյանի համայնքապետարանում կայացած աճուրդում համայնքի սեփականություն հանդիսացող Չկալով գյուղում գտնվող 06-089-0124-0003 կադաստրային ծածկագրի 0.72394 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության,խոտհարք գործառնական նշանակության հողամասը սակարկության արդյունքում հաղթող է ճանաչվել Արկադի Արտավազդի Հակոբյանը՝
Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Չկալով գյուղում գտնվող 06-089-0124-0003 կադաստրային ծածկագրի 0.72394 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասը, որը չի համարվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս, օտարել Արկադի Արտավազդի Հակոբյանին՝ այսուհետ գնորդ:
2. Սահմանել, որ գնորդը պարտավոր է աճուրդը կայանալուց հետո 10-օրյա ժամկետում հողատարածքի սակարկության արդյունքում ձևավորված գինը՝ 420000 (չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ վճարել Թումանյան համայնքի բյուջեի N 90026513023 հաշվին:
3. Թումանյան համայնքի ղեկավարի անունից գնորդի հետ 2-օրյա ժամկետում կնքել հողատարածքի օտարման պայմանագիր:
4. Նախազգուշացնել գնորդին, որ հողատարածքի օտարման պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5.Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23թ. մարտի 30
ք.Թումանյան